# ՆՈՐ-ԴԱՐ

№ 28 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ[ա]բաթ 27 Փետրվարի 1888 Հ[ա]բաթ 27 Փետրվարի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 28

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ., ամսով՝ 1 ր. 50 կ., Հատով 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գումարն 2 կ., բեկուածների համար կրկնապատիկ։



Кавказскій Телеграфъ 2 Kreuzer
Тифлисъ 27 ФЕВ 1888 Почтамтъ


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Քրոնիկոն. — Լուրեր։ Նշմարներ (շարունակ.)։
Թղթակցութիւններ.— Վաղարշապատից։ Շուշիից։
Խառն Լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրները։
Յայտարարութիւններ։


## ՔՐՈՆԻԿՈՆ

Ուրբաթ, փետրվարի 26-ին, Նորին կայսերական Մեծութիւն Ալէքսանդր III կայսրի անուանակոչութեան օրը հանդիսաւոր մաղթանք կատարուեց վանքի Մայր եկեղեցում և Սիոնում։ Կէս օրին մօտերքը տօնը ողջունուեց որոշեալ թիւ թնդանօթ արձակուելով։ Քաղաքը առաւօտից զարդարած էր զբօսականերով. երեկոյեան հրաշալոյց էր։

—

Ի ԳԻՏԻՐԻՑ ստացել ենք պ. Յակոբ կանաեանից տասն եօթ րուբլի (17 ր.), որ նա պ. Աւետիս Ահարոնեանցի օգնութեամբ հաւաքել է մի քանի պարոնների մէջ պէյթունցիների օգտին։

—

Դելիջանից Մեծ-Ղարաքլիսա տանող ճանապարհի վերայ բնկած Համզաչիման հայարնակ գիւղից մեզ գրում են, որ նոյն տեղի մի երկու վաշխառուներ, գիւղական ժողովրդին ծըծելու և արիւնաքամ անելու գործը աւելի աջողութեամբ առաջ տանելու համար մի նոր մէջոց են հնարել։ Նրանք խանութի են բաց արել և ապրանք են տալիս մեամիտ և կարօտ գիւղացիներին նիսիա։ Յանցանքը նիսիա ապրանք տալումը չէ, այլ այն մեքենայութեան մէջ, որ նրանք այդտեղ գործ են դնում։ Գիւղացին թէկուզ մէկ րուբլու ապրանք լինի տանում, պարտաւոր է սապատա-մուրհակ (վէքսել) տալու որոշ ժամանակով, և հարկէ և տոկոսն էլ վրան հաշուած։

Բացի պարտամուրհակից, գիւղացին պարտաւորվում է մի առանձին թղթով էլ պարտամուրհակի ժամանակը լրանալուց յետոյ, եթէ չկարողանայ պարտքը վճարել, օրեկան րուբլուն մէկ կոպէկ տուգանք տալ։ Աւելի քան հետանոսական է, որ նիսիա ապրանք տանող գիւղացին ժամանակին չվերադարձրած պարտքի համար ենթարկվում է ծանր տուգանքի, որ նիսիա ապրանք տանողը ոչ միայն գիւղացուն չի ենթարկում, այլ ընդհակառակն, ամեն կերպով ջանում է գրաւել տանուտէրների և ուրիշների սիրտը, որպէսզի յետոյ ամեն տեսակ չարիքներ գործելու ժամանակ նրանց օգնութեան դիմի։

—

Ուրբաթ, փետրվարի 26-ին կայացաւ Թիֆլիսի վարժուհիների և ուսուցչուհիների փոխադարձ օգնութեան ընկերութեան ընդհանուր ժողովը՝ Թիֆլիսի օբսերվատորիայի գիմնազիայի դահլիճում։ Ժողովում յայտնուած լաւագոյնից նշանաւորն էր. — բանալ գրադարան-ընթերցարան ընկերութեան անդամների համար. որոշուեց 250 ր. յատկացնել գրքեր և լրագիրներ բերել տալու նպատակով. Ձրի կամ էժան բնակարաններ գտնել ընկերութեան անդամների համար. այդ խնդիրը մշակելու համար ընտրուեց մի մասնաժողով. այդ նպատակի համար որպէս ֆոնդ, նշանակուեց 330 րուբլի։ Այնուհետև եղան մի քանի նոր անդամների և գործադիր ժողովի անդամների ընտրութիւնը։

Պէտք է ասել, որ ժողովը բաւական հետաքրքիր էր և կենդանի. ներւում էր, որ անդամները խոստ համոստ էին խօսել-վիճաբանելու կողմից։

Այս ընկերութեան նման ընկերութիւն, եթէ չենք սխալվում, երկու հատ կայ Ռուսիայում, մինը Պետերբուրգում՝ որի վերայ մի քանի անգամ մասնաւոյց արեց յարդելի նախագահը հարկաւոր միջոցներին և միւսը Մօսկվայում։

—

Թիֆլիսում ահա քանի տարի է գոյութիւն ունի մի ընկերութիւն, որ կոչվում է «Ուսուցչուհիների և վարժուհիների փոխադարձ օգնութեան ընկերութիւն» և հաստատուած է 1886 Թուի յունվարի 4-ին։ Ընկերութիւնն ամեն տարի ունենում է ընդհանուր ժողով. այս տարի ընդ. ժողով նշանակուած էր փետրվարի սկզբներում, սակայն, որը, ժողովին եկող անդամների պակասութեան պատճառով չկայացաւ։ Այդ ընկերութիւնը, ինչպէս երևում է նրա հրատարակած տեղեկագրից, 1887 թ. յունվարի 5-ին ունեցել է 205 անդամ, իսկ այս տարուայ յունվարի 1-ին 167 անդամ, որոնք ըստ ազգութեան բաժանուած են այսպէս.—ընկերութիւնն ունի երկու պատուաւոր անդամներ, որոնք ռուս են, 45 գործակից անդամներ, որոնցից 19-ը ռուս են, 14-ը հայ, 6-ը վրացի և 6-ն էլ զանազան ազգերից. 120 իսկական անդամներ, որոնց ինչ ազգութեան պատկանելն որոշուած չէ տեղեկագրում։ 1887 Թուին անդամավճարից ժողովուած է 1,053 րուբլի՝ նախընթաց տարուց 395 ր. պակաս, նուէրը ստացուել է 5 ր.՝ 350 ր. 50 կ. պակաս նախընթաց տարուանից։ Ընդամենը 1887 Թուին մտել է 2,544 ր. 92 կ., 462 ր. 13 կ. պակաս նախընթաց տարուանից։ Նախընթաց տարուանից մնացել է 1,968 ր. 90 կոպէկ, իսկ ծախս եղել է 1,941 ր. 83 կ., որից 1,050 ր. փոխ է տրուած 24 անդամներին, իսկ 220 ր. էլ տրուած է 7 անդամներին անդարձ կերպով։ 1887 թ. յունվարի 1-ին ընկերութիւնն ունեցել է 2,571 ր. 99 կոպէկ. բացի այդ փոխ է տուած 1,174 ր., ընդամենը 3,745 ր. 99 կոպէկ։

—

ՂԱԶԱԽԻՑ.—Ներկայ փետր. 16-ից Գանձակի նահանգ. դատարանի բաժինը գտնվում է մեր քաղաքում, որ պիտի մնայ մինչև ապրիլ ամսի 20-ը։ Այդ որոշեալ ժամանակամիջոցում պիտի քննուեն մօտաւորապէս երկու հարիւր գործեր։ Կովկասում և Անդր-Կովկասում դատաստանական վերանորոգութիւնները մտցնելուց յետոյ, առաջին անգամն է, որ նահանգական դատարանի բաժինը հնւր է գալիս մեր քաղաքը։ Մինչև այդ ժամանակը, բոլոր քրէական գործերը քննվում էին Գանձակում և դատապարտեալները չըղթայակապ տանջվում էին այնտեղ։ Ղազախեցիների համար բոլորովին նոր բան է չուտով դատաստան կըրուելը և այն գրութիւնը, որի մէջ կատարվում է դա։ Այսպէս, օրինակ, չորս օրուայ մէջ տասից աւելի մարդ է պատժվում, այն էլ աքսոր, կամ 10—20 տարի տաժանակիր աշխատանքի դատապարտվում։ Նրանց համար բոլորովին նոր բան է դատաստանական դահլիճը, նախագահի հարց ու փորձը, դատախազի մեղադրութիւնը, փաստաբանի երկար-բարակ ճառը...։ Սակայն ղազախեցին գտնում է միջոց խոյս տալու և դատաստանից։ Փետրվարի 18-ին, երկու Թուրք, որոնք մեղադրվում էին մարդասպանութեան մէջ և որոնք երաշխաւորութեամբ ազատուած էին բանտից, իրենց երաշխաւորների հետ ներկայանում են դատարան։ Հենց այդ օրն էլ պիտի քննուէր նրանց գործը։ Երաշխաւորները գնալուց յետոյ, յանցաւորները իրենք էլ հենց նոյն ժամին, սուս ու փուս անհետանում են դատարանից։ Ի հարկէ, հենց նոյն ժամին հարկաւոր տնօրինութիւն եղաւ նրանց չուտով բռնելու և դատարանին յանձնելու համար։

Մօտ օրերումս պիտի քննուին մի քանի գործեր, որոնք պէտք է որ շատ հետաքրքրեն ընթերցող հասարակութեան։ Ի միջի այլոց պիտի քննուին և կոտրենդցի Գեղալովին սպանման գործը, դահլեսամանցի Իբրահիմի մարդասպանութեան գործը և ուշագակատ Քեարամի երբեմն ընկերը, այժմ հակառակորդ Խրաճիկ Աղի գործը։ Այդ բոլորի հետևանքը նւր ժամանակին կը հաղորդենք «Նոր-Դար»-ի ընթերցողներին։ Այսօր, փետրվարի 22-ին, դատարանում քննվում է Քեարամի ընկերը Խաչենդարի գործը։ Դատարանի միջոցը լիքը մարդով են։

—

Ուրբաթ, փետրվարի 26-ին կրկին չստացուեց Ռուսիայի պօստը։ Երևի այս ամբողջ շաբաթը պէտք է կըրճատուած մնանք երբոպայից և Ռուսիայից։

Այդ մասին տեղական «Листокъ»-ին հետագրում են պատերազմական-վիրան Ճանապարհի Կօրի կայարանից. «Կօրիում ձիւն է գալիս. փչում է քամին, ցուրտը 2-° է։ Դէպի վլադիկավկաս Ճանապարհը մաքրուած է։ Ռուսիայի պօստը հասաւ Կօրի և այստեղ կանգ առաւ»։ Մի ուրիշ հետագիր էլ Գուդաուարից հաղորդում է, թէ՝ «Գուդաուարում գալիս է մանր ձիւն, քամի է. ջերմաչափը 0-° է ցոյց տալիս։ Ճանապարհը դէպի Պասանաուր մաքրուած է, բայց յուսալի չէ։ Թիֆլիսի պօստը բարձուած է Գուդաուարում։ Դէպի Կօրին Ճանապարհը փակուած է հիւսերով։ Պատերազմական-վիրական ամբողջ Ճանապարհի վերայ 8 տեղ փակուած էր, իսկ այժմ միայն երկու տեղ է փակուած, Կօրիի և Գուդաուարի մէջ։ Հեռագրական յարաբերութիւնն վերականգնած է Ռուսիայի և Թիֆլիսի մէջ։

—

Վերջին շաբաթս Քուրի ջուրը քանի գնում բարձրանում է, այնպէս որ, վարանցովի կամուրջի տակ գոյացած փոքրիկ կղզիակը բոլորովին ծածկուել է ջրով։ Քուրի ջուրը խիստ պղտորել է։ Ահա քանի օր է, որ փչում է հիւսիսային սաստ քամին, այնպէս որ, ձմեռը կարծես նորից է սկսում։ Քամի օգուտն այն եղաւ, որ փողոցները չորացան ցեխից։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են.—Վերջապէս մեր գպրոցների գրադարանին պատկանեալ գրքերը, որ գպրոցների փակման օրից մնացել էին փոշիների մէջ և մկների կերակուր դարձել, այս օրերս հաւլիս նրանց մի չնչին մասը ազատուեց և տեղաւորուեց գպրոցի սենեակներից մէկի մէջ։

Ինգդիրի ընթերցասէր երիտասարդները պ. Ա. Ահարոնեանի աշխատութեամբ, վերջին օրերումս բաւական նկատելի նպաստ տուին տեղիս գրադարանին. գովելի է երիտասարդների եռանդը։ Ցանկալին այն կը լինէր, որ այդ հանրօգուտ հաստատութեան մասնակցէր Իգդիրի ամբողջ հասարակութիւնը։

—«Նոր-Դար»-ի Կ. Պօլսի և Զմիւռնիայի թղթակիցների գրածները մեծ համակրութեամբ և հետաքրքրութեամբ են կարդացվում։ Գործերի իսկական դրութիւնը վերջապէս մեզ հնար եղաւ հասկանալու։ Մինչև Քրը պէտք է մենք անգիտակ մնանք թիւրքահայերի գործերի իսկական դրութիւնից։ կարծում ենք, որ ժամանակ է վերջ տալու սուտ ու պատիր տեղեկութիւններին։

## ՆԵՄԱՐՆԵՐ *)

Դրականական-հասարակական աշխարհի սահմաններից.

—

Կոմս Միլիւտինի նշանակութիւնը «լրատուիչ» կոչուելու ծարաւի մէջ, որով տոգորուած էր Ա. Բատեմբէքը, հաստատվում է Մատվէեվի պատմութեան հետևեալ տողերով (եր. 8). «Կոմս Միլիւտինի պաշտօնանկութիւնը զգալի կերպով փոխեց երկրի դրութիւնը... Բօլդարեան եկեղեցի (1881 թ.) Պետերբուրգից վերադարձաւ այն համոզմամբ, թէ այլ ևս Ռուսիան veto —արգելք չէ դնել վարդից իւր սարքած յեղափոխութեան՝ Տըրնովեան սահմանադրութիւնը ոչնչացնելու նպատակով»... Աղէքսանդր եկեղեցի՝ Պետերբուրգից վերադառնալով և խոսելով Կարավելովի հետ՝ փոխեց իւր խօսելու եղանակը, և յայտնեց նրան, թէ այսուհետև նրա կուսակցութիւնը կարող չէ յոյս դնել ռուս կառավարութեան վերայ և թէ Տըրնովեան սահմանադրութիւնը գրկվում է իւր յանձին կոմս Միլիւտինի ամենամեծ պաշտպանից, որի ձայնը այլևս նշանակութիւն չունի Բօլդարեայի վերաբերեալ արտաքին քաղաքականութեան հարցերի մէջ։ Իսկ պ. Նօվիկովը,—հեգնութեամբ աւելացրեց եղեսանը,—ամենևին չէ համակրում ձեր կուսակցութեան և Տըրնովի սահմանադրութեան». (եր. 83)։ Մի խօսքով ուրախացաւ գնդապետը և ծիծաղեց։

Մեզ անհնար է այս կարճ գիտողութեան մէջ առաջ բերել ամեն տեսակ դիւանագիտական, երեսփոխանական և եկեղեցական հետամտութիւնների, նենգութիւնների, սխալների և ամենակերպ բաղադրեալ պայմանաբանութիւնների փոքրիկ և նուրբ մանրամասնութիւնները, որոնցից վերջ ի վերջոյ «յեղափոխութիւնը» դուրս եկաւ։ Մենք վեր կառնենք ամենակարևոր գծերը և ամենաերբական շարժառիթները, որոնցով առաջնորդվում էին յեղափոխութեան սեռեղծողները։ Ժողովրդից յարատեւելու և երեն՝ եկեղեցին աւելացնելու անհրաժեշտութեան մտքը բոլորովին յղացած է Բատեմբէքի եկեղեցի մէջ։ Նշանակում է այս եկեղեցական փափաքների մէջ հարկաւոր է որոնել այնքան փառաւոր կերպով սկսած գործի խանգարման սրտմտութ։ Ինչ էր իսկապէս օգում եկեղեցի։ «Նրա բոլոր հոգացողութիւնը դարձած էր նրա համար նշանակուած թոշակի աւելացնելու վերայ, թէև ինում էր՝ թէ երեսփոխանական ժողովի կողմից եկեղեցի և նրա արքունիքի մատակարարութեան համար նշանակուած 600 հազար ֆրանկը բոլորովին բաւական պիտի լինէր, մանաւանդ՝ եթէ այդքի առաջ ունենանք, որ բոլղարական կեանքի պայմանները անպատճառ են և եկեղեցի համար Ռուսիայից էլ նշանակուած էր նպաստ թոշակ» (եր. 131)։

«Պ. Դրանդարը՝ «Բատեմբէքցի հինգ տարուայ եկեղեցութիւնը» գրքի հեղինակը, ասում է. «Յեղափոխութեան գլխաւոր պատճառներից մինն էր այն ժլատութիւնը, որով ազգային ժողովը որոշում էր պատրաստի շինութեան ծախքը»։ Յեղափոխութեան գլխաւոր պատճառը եկեղեցի անբաւականութիւնն էր ազատամիտների դէմ, որով սրանք բացատեցին այն փողը, որ եկեղեցը կամենում էր ժողովից ըստանալ՝ նոր պալատ շինելու համար։ Վճռուած էր Թիւրքերից մնացած հին խոնարհը (ապարան Թիւրք կառավարիչների) վերածել նոր փառաւոր շինութեան, որի համար հարկաւոր էր շատ փող մսխել։ Եկեսփոխանական ժողովը այս չնչի համար շատ ժլատ վարկ բաց արաւ։ Այս բանը շատ զայրացրեց եկեղեցին։ Պալատի շինութեան կատարը տակաւին նախկին պահպանողական նախարարութեան ժամանակ արուած էր մի ոմն Թօջաեվ անուն բօլղարի...»։ Թօջաեվը մի յայտնի բադդախնդիր և նենգաւոր մարդ էր և տակաւին մինչև պատերազմը՝ Ռումինիայում պարապում էր կասկածաւոր գործերով» (եր. 132)։

Թօջաեվը բարեկամացաւ պահպանողական մինիստրութեան հետ, որ իսկոյն կապտոյով տուեց նրան պալատի շինութիւնը։ Երբ որ կառավարութիւնը ազատականների ձեռն անցաւ, Թօջաեվը ամեն կերպ աշխատում էր մոտերմանալ Կարավելովին և Ցանկովին, բայց երբ այս բանը չյաջողեց, նա դարձաւ երդուեալ թշնամի ազատական մինիստրութեան, ամենագործօն

*) Տես «Նոր-Դար» № 27.

պարագլուխ դիմադրութեան և վերջապէս Տըրնովեան սահմանադրութեան դէմ լարուած դաւի հոգին» (եր. 133)։

Կար մի այնպիսի արտաքաղ ժամանակաւիճակ, երբ Պետերբուրգում կաբծես՝ ամենևին մոռացութեան տրըւուեցաւ բոլոր ազգային գործը։ Եւ ահա այս միջոցին Բատտենբէրգ իշխանը Նաչէվիչի, Սոյլօվի և Թօշաեվի հետ ամենանուրբ կերպով կշռելով աչքոզութեան հաւանականութիւնը, խոհոյն միտք արին գլուխ հանել իրենց ծածուկ գործը և սրանով հասնել իրենց ծածուկ նպատակներին։

1881 Թ. ապրիլի 28-ին, առաւօտը վաղ՝ Սօֆիայի հարաւային շինութիւնների պատերի վերայ երևաց իշխանի հեռևեալ հրաւէրը.—

Բօլղարներ.

«Երկու տարի անց է կացել այն օրից, երբ Աստուծուն հաճոյ եղաւ յանձնել ինձ բօլղար ժողովուրդի բաղդի կառավարութիւնը, որ միաձայն ընտրել է ինձ իրեն իշխանը...»։

Սրանից յետոյ յիշելով, որ նա վըճռել է առանց տատանելու Հպատակել Աստուածային նախախնամութեան կամքին, այսու ամենայնիւ նա հարկադրուած է յոստովանել, որ չնայելով իւր ամենակերպ աշխատելուն երկիրը բարեկարգելու՝ «նա (այդ երկիրը) անուանարկուել է դրսից և խանգարուել է ներսից»։ «Ես երդուել եմ սահմանադրութեան, հաւատարիմ եմ մնացել իմ տուած երդման և մինչև կեանքիս վերջը կը մնամ...» «Եթէ ազգային ժողովը հաւանութիւն կը տայ այն պայմաններին, որ ես անհրաժեշտ եմ համարում երկրի կառավարութեան համար, և որոնց բացակայութիւնը իրերի նեղկայ դրութեան արմատական պակասութիւնն է, —այս պայմանները ես պիտի ցոյց տամ,—այն ժամանակ ես համաձայն եմ կրել բօլղարական թագը և տանել իմ վերայ դրած ծանր պատասխանատուութիւնը Աստուծոյ և ապագայ սերունդի առաջ։ Հակառակ դէպքում ես հրաժարվում եմ իշխանական գահից՝ թէև ցաւակցութեամբ, բայց ըստ խղճի մտաց ճանաչելով, որ մինչև վերջը կատարեցի իմ պարտքը» (139)։

(Կը շարունակուի)

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, 6 փետրվարի.—Անցեալ տարի երկու պարոններ պատուական «Նոր-Դար»-ում նկատողութիւն էին արել Վաղարշապատի դպրոցի մասին, որոնց թէև հոգաբարձութիւնս չէր կամենում պատասխանել մինչև տարեկան հարցաքննութեան ժամանակ, բայց պարզամիտների աչքում դպրոցի յարգը վայր չձգելու համար պարտք է համարում այս քանի մի տողով պարզել գործի էութիւնը։ Լրատու պարոններից առաջինը՝ պ. Բ. Տ. Գ. գովելով օրիորդական դպրոցի առաջադիմութիւնը, տղայոց դպրոցի հսկողութիւնը Թոյլ էր անուանում։ Բացի այն, որ Բ. Տ. Գ. դպրոցների չէքը ոտք չէ դրել, թէև հասկացողութիւն է կազմել մեր դպրոցների առաջադիմութեան և հսկողութեան մասին. նրա ասած Թոյլ հսկողութիւնը առաջացել է հետևեալ հանգամանքից.—Մի օր նրա ուշնամեայ որդին, որ տղակերտ է մեր դպրոցի առաջին բաժանմունքում, լալով պիտում է տուն՝ հօր մօր պատմելով, թէ ինչպէս նրա ընկերները դպրոցից դուրս, նրան խփել գլորել է, հայրն էլ տեսնելով որդու լացը, մոռանալով մանկական բնութեան ազդեցութիւնը, այս դէպքից եզրակացրել էր, որ ուսումնարանում «Թոյլ է հսկողութիւնը»։ Պէտք է ասենք, որ եթէ պ. Բ. Տ.-Գ.-ը հաւատար գիտէր դպրոցի հսկողութեան Թուլութիւնը և ցանկանում էր դպրոցին առաջադիմութիւն, պարտաւոր էր պարզել թէ՝ ինչումն էր կայանում Թոյլ հսկողութիւնը, որ գոնէ դպրոցի կառավարութիւնը կարողանար դրա առաջն առնել։ Իսկ երկրորդ լրատուն՝ նոյն դպրոցի ուսուցիչ պ. Գաբսևան ցակովբեանը (Սլիւնի) երևի չը հասկանալով լրատուի միտքը և ոչ էլ «Թոյլ հսկողութեան» առիթը, աշխատում է հերքել Բ. Տ. Գ-ի գրածը և բացի այդ մի քանի ակնարկութիւնները էլ արել է դէպի հոգաբարձութիւնը և դպրոցական կառավարութիւնը և աշակերտաց ծնողները։ Բայց Թողնելով ուրիշներին վերաբերեալները, հոգաբարձութիւնս հարկ է համարում մասնաւորապէս բացատրել այն կէտերի մասին, որոնք դպրոցի կառավարութեան և հոգաբարձութեանն են վերաբերում, հաւատի լինելով, որ յարգոյ ընթերցողները հոգաբարձութեան և ուսուցչի մէջ ծագած այսպիսի մի հրապարակական առարկութիւնները չը պէտք է վերագրեն դպրոցների առաջադիմութիւնն խանգարող միջոցներին, որովհետև, կանոնագրի 25-րդ յօդուածով, դպրոցների ուսումնական մասին կառավարութիւնը և հսկողութիւնը յանձնուած է աւագ ուսուցչին, որ աւելի ուսուցիչների դասին պատկանող քան թէ հոգաբարձութեան իրաւասութեան ենթակայ մի առանձին անձնաւորութիւն է, և որին փոքրով հաւատացել է հոգաբարձութիւնը և նշանակել է այդ պաշտօնին։ Ուրեմն Թող վերանէ յարգոյ ընթերցողը լրագրիդ 1887 Թուի 222 համարը և բաղդատէ պ. Գաբսևան ցակովբեանի (Սլիւնի) յօդուածը հոգաբարձութեանս բացատրութեան հետ, որով հոգաբարձութիւնս հաւատացնում է, 1) որ մի գիւղի դպրոցի հոգաբարձուներից, որոնք տնտեսական կառավարութիւնը հոգալուց յետոյ, ամեն օր այցելում են դպրոցները, հսկում են ուսուցիչների և ուսուցչուհիների որոշեալ ժամանակին դպրոց գալու վերայ, աւելի օչինչ չէ կարելի պահանջել. իսկ այնուհետև մնում է աւագ ուսուցչին գործելու, որին յանձնուած է ուսումնական մասի կառավարութիւնը և հսկողութիւնը, որոնք կը յայտնուին տարեկան հարցաքննութեան ժամանակ։ 2) Համեմատելով մեր դպրոցների կառավարութիւնը մեր ժողովրդի դէպի դպրոցներն ունեցած համակրութեան հետ, հոգով կարելի է վկայել և գործով իսկ կարելի է հաստատել, որ՝ ոչ Թէ Թուլութիւն է նկատվում, այլ մեծ առաջադիմութիւն է տեսնվում ուսման և կրթութեան մէջ։ 3) Ոչինչ կանոնական յարաբերութիւն տեղի չէ ունեցել մեր դպրոցների կառավարութեան մէջ բացի համերաշխութիւնից։ 4) Թէ անցեալ տարուայ ուսուցիչներից երկուսի տակութեան պատճառը մեր դպրոցների չինութիւնները ձևը չէին, այդ հոգաբարձութիւնս հաստատում է նրանով, որ նրանք այս տարի ևս ցանկութիւն յայտնեցին կրկին ուսուցիչ վարձուելու, բայց հոգաբարձութիւնս ինչ-ինչ պատճառներով չհամաձայնեց այդ բանին։ 5) Ուսուցիչների վարձը որոշուել է երկու կողմի համաձայնութեամբ. դասերի և աշակերտների Թիւը որոշուած է ծրագրով. վերակացութիւնը ուսուցիչները կամովին յանձն առան. դպրոցների առողջապահական յարմարութիւնները ուսուցիչներին արդէն վաղուց ծանօթ էր, որովհետև վերջիններս տեղացի բնակիչ էին։ Այժմեայ դասախօսել է երբեմն և պ. Ս. Մանդինեանն և այս պահանջը չէ ունեցել։ Իհարկէ, մեր ուսումնարանի դասարանները չեն համապատասխանի դասատուների հետ համեմատելի չենք կարող։ 6) Ուսուցիչների փոդոցի տղաների հետ դպրոցի բակում կռուելն աւելորդ է, քանի որ կարգադրուած է աշակերտների լաղալու ժամանակ սրահի գռները փակել և դրանով Թոյլ չտալ օտար տղաներին դպրոցի գաւիթը մտնելու. դրա համար բաւական են դպրոցների 2 ծառաները։ 7) Ուսուցիչները պատասխանատու են համարվում աշակերտների ուսման և վարքի համար միայն դպրոցում. դպրոցից դուրս աշակերտների հսկողութիւնը մնում է ծնողներին, հասարակութեանը և տնական պաշտօնական անձերին. իսկ եթէ ուսուցիչները իրենց մարգասիրութիւնից դրդուած ցանկանում են իրենց աշակերտների վերայ դպրոցից դուրս՝ փոդոցներումն ևս աչք ունենալ և հսկել և կամ, իրրև հասարակութեան անդամ, կըրթել նրանց, այդ չէ նշանակում, որ դպրոցի կառավարութիւնը ուսուցիչների վերայ մի աւելորդ պարտք է ծանրացրել նրանց ձնշելու նպատակով։ 8) Թէ ծնողները ուսուցիչներից պահանջել են փոդոցի փոդոց մանգալ և հսկել իրենց որդիների վերայ, այդ յայտնի չէ հոգաբարձութեանս, և եթէ ուսուցիչը ծնողների այսպիսի պահանջները յանձն կառնում կատարելու, հոգաբարձութիւնս ինչ կարող է անել այդպիսի դէպքում։ Պարոն Գաբսևանի բողոքի մասին ոչինչ չենք ասիլ, որովհետև դա հոգաբարձութեանս ընդունից դուրս է։

Հոգաբարձուներ՝—Վահան Օհանջանեան, Միքոտիչ Ենգիբարեան, Կարապետ Գառնեան։

---

ՇՈՒՇԻ, 21 փետրվարի.—Ցարգոյ լսմբագիր. «Նոր-Դար»-ի 18 համարում տպած լուրերը Շուշու Թեմական դպրանոցի վերաբերմամբ և այլն՝ կարծում են Թէ ես եմ հաղորդել։ Այսու պատիւ ունիմ յայտնելու, որ այդ լուրերի հաղորդողը ես չեմ, ուստի Թող հանգիստ լինին նրանք, որոնք կասկածում են իմ մասին։ Իսկ Թէ լուրերը ճշմարտութեամբ են հաղորդած, Թէ զրպարտութեամբ, այդ, կարծեմ, ինձանից չէ կախուած բացատրելու *)։

Ընդունեցէք...

Մկրտչ Տէր Սարգսեանց

## ԽԱՒՆ ԼՈՒԻՐԵՐ

Գայլերի դոհը.—Ընգարական լրագիրները պատմում են հետևեալ դէպքը։ Մի գիւղացի իւր կնոջ և վեց տարեկան աղջկայ հետ հիւր են գնում։ Ճանապարհին անտառապահը նրանց խնդրում է, որ իրեն էլ առնեն հետները։ Նրան էլ նստեցնում են կառք։ Մի քանի վայրկեան անցած չորս գայլեր յարձակվում են նրանց վերայ։ Փչում են կառքը՝ բայց գայլերը հասուէ հաս գալիս են նրանց հետևից։ Այն ժամանակ անտառապահն առանց մի լոսք ասելու, վեր է առնում վեցամեայ աղջկան և նախ քան Թէ խեղճ երեխայի ծնողները կը հասկանային, Թէ բանը ինչումն է, ձգում է գայլերին կերակուր։ Մինչև գայլերը յարձակվում են իրենց զոհի վերայ, կառքը հեռանում է նրանցից և ազատվում։

*** Անգլիական վիկտորիա Թագուհին այս օրերս ստորագրեց Ջօրջ Բիզլէին ներումն չնորհելու հրամանագիրը, որ մի սպանութեան գործի համար ցմահ բանտարկութեան և տաժանակիր աշխատանքի էր դատապարտուած։ Բիզլէը արդէն 16 տարի նըստել է բանտում և նոր միայն յայտնվում է, որ նա չէ եղել սպանողը այլ ուրիշ մինը, հապա սխալանքի զոհ է եղել ինքը։ Դատավճիռը կարդացուելիս Բիզլէը 27 տարեկան էր, իսկ այժմ բանտից դուրս գալիս—43 տարեկան։

*** Ամերիկական լրագիրները հաղորդում են, որ մարտի 13-ին Վաշինգտոնում բացուելու է կանանց կօնգրէս։ Սպասում են պատգամաւորուհիների ներկայացի գանագան պետութիւններից էլ։

*** Նիւ-Եօրկում մրցանակ է նշանակուած Միացեալ-Նահանգների նախագահին արձան կանգնեցնելու համար կազմելու ծրագրի վերաբերութեամբ։ Նկարները ստացուել են մինչև այս տարուայ նոյեմբերի 1-ը։ Յանձնաժողովն ընտրելու է պատկերների ամենալաւերից հինգը, որոնց տէրերը պիտի ստանան 1500—2000 դոլլար վարձատրութիւն։

---

Խմբագիր-Հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

---

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՊՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ

*երթևեկութիւնը պատերազմական-վիճակի Հանապարհով*

1887 Թ. նոյեմ. 15-ից—1888 Թ. մայիսի 15-ը։

Թիֆլիսից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը առաւօտեան ժամը 8-ին, Մլէթի կայարանում գիշերելով. հասնում է Վլադիկավկազ միևս օրը երեկոյեան ժամը 8-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը դուրս է գալիս ցերեկուայ ժամը 4-ին, առանց գիշերելու, միևս օրը, երեկոյեան ժամը 7-ին՝ հասնում է Վլադիկավկազ։

Վլադիկավկազից

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դուրս է գալիս առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում և միևս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում է Թիֆլիս։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը դուրս է գալիս ցերեկը, ժամը 6½-ին, առանց գիշերելու, միևս օրը երեկոյեան 9 ժ. 50 վ.-ին հասնում է Թիֆլիս։

---

## ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Նոգնեռատային երթևեկութիւն Բաթումից, Օզեսայի և Կ. Պօլսի միջև։

—

Բաթումից գնում է

Հինգշաբթիները.—Կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովոռօսիյսկի և Կերչի վերայով։

Շաբաթ օրերը.—Երեկոյեան 8 ժամերին, շոգենաւու ընթացքով, բոլոր նաւահանգիստները պատահելով։

Երկուշաբթիները.—Երեկոյեան արտասահմանեան գնացքով Կ. Պօլիս։

Բաթումից գալիս է

Երեքշաբթիները.—Կէս գիշերուայ մօտերքը, Օզեսայից, շոգենաւու ընթացքով։

Ուրբաթները. — Առաւօտը, Օզեսայից, ուղիղ գծով՝ Կերչի և Նովոռօսիյսկի վերայով։

Շաբաթ օրերը.—Առաւօտը Կ. Պօլսից։

Փոթիից գնում է Բաթում

Երկուշաբթիները.—Սուխումից շոգենաւու նաւը նաւահանգիստ գալուց յետոյ։

Հինգշաբթիները. — Առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղագիծ շոգենաւին միանալու։

Շաբաթ օրերը. — Առ. ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան և Րուսիչլիա-Անատօլեան շոգենաւին միանալու։

Բաթումից գնում է Փոթի

Ուրբաթ և կիրակի օրերը.—Նաւի դուրս գնալու ժամը որոշվում է Բաթումի նաւային գործակալութիւնից՝ նաւը Փոթիից գալուց յետոյ։

Բացի այդ, ամեն շաբաթ Փոթի գալիս են Օզեսայից և Ղրիմ-Կովկասեան գծի նաւահանգիստներից որոշեալ ժամանակի ապրանքակիը և մարդակիրը խառն նաւերը՝ կիրակի օրերը երեկոյեան և գնում են Բաթում՝ երեքշաբթի օրերը, երբից գործառնութիւնները վերջացնելուց յետոյ, իսկ Բաթումից՝ ուրբաթ օրերը երեկոյեան, որ մտնում է Ղրիմ-Կովկասեան նաւահանգիստները, եթէ կարիք լինի, մտնում է և Փոթի։

---

## ՇԱՏ ՁԱՓԱԻՈՐ ՎԱՐՁԱՏՈՒԹԵԱՄԲ

Հայոց և ռուսաց լեզուներով, սովորեցնում եմ

ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԱՔՆՈՀԵՆՉ ԵՂԱՆԱԿՈՎ

(Տարրական թուաբանութիւն իմացողներին սովորեցնում եմ ՅԻՍՆ ՄԻ ԱՄԱՌԱՅ ԸՆԴՄԱՅՈՒԹԻՒՆ)։

Ընդունում են նոյնպէս պատուէրներ շինուածք հաշիւները պարզելու և նրանց կարգի դնելու։ Օտարաքաղաքացի ուսանողները կարող են, ըստ ցանկութեան, և գիշերօթիկ լինել ինչ ձև՝ մինչև ուսման ընթացքի աւարտումը։

Մանրամասնութիւնների համար տեղեկութիւն ստանալ ցանկացողը կարող է դիմել ինձ նամակով հետևեալ հասցէով.

Тифлисъ, М. Гулиеву, меблированные номера вов. дома Сараджева на Дворцовой ул.

(2) 5—5

---

ԾԵՐԵՆՑԻ (ԴՕԿՏՕՐ ՇԻՇՄԱՆԵԱՆԻ)

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԻՊԵՐԸ՝

1. Թորոս Լևոնի . . . . . 1 րուբլի
2. Երկունք—իններորդ դարու . . . . . 1 »
3. Թէոդորոս Ռշտունի . . . . . 1 »

Վաճառվում են գրանց հրատարակող «ՁԱՓԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻՄԻՆ»։

6—5

---

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԴՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

# Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէլլի և Բաթումի մէջ։

Հինգշաբթի, մարտի 3-ին, «ՄԻՆԴՐԷԼԻԱ» (Mingrelie) շոգենաւը, նաւապետ «ԺԻՐՈՒԻԷՆ» (Giboin) դուրս կը գայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէլլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալութեան Բաթումում՝ պ. ԴԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԻՆՕԻՆ, նախկին գալերէյա Արծրունիների № 103. 4—4

---

Дозволено цензурою. Тифлисъ, 26-го Февраля 1888 г. Տպարան Լ. Գ. Կրամարէնկօյի Типографія Л. Г. Крамаренко, Гол. пр., д. Читахова.